
Տ. ԶԱՔԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂՈՒՄՅԱՆ



Ծնվել է 1978 թ. մարտի 25-ին Երեւանում: Ավազանի անունը՝ Տիգրան:

1985–1995 թթ. սովորել է Երեւանի թիվ 163, 177 միջնակարգ դպրոցներում:

1995–2000 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2000–2001 թթ. սովորել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի Ջ. լսարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփանոս Նախատարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռնադրվել է սարկավագ:

2000–2001 թթ. Հայաստանի Ամերիկյան Համալսարանում հետեւել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին:

2001 թ. հուլիս ամսին Հայրապետական տնօրինությամբ աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում:

2002 թ. փետրվար-հունիս ամիսներին ուսանել է Դանիայի Օրհուս քաղաքի Diaconal Folk High School-*ում՝ ուսումնասիրելով սոցիալական աստվածաբանություն:*

2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ Պետրոս արք. Բերդումյանի «Մեկնութիւն Մննդոց» աշխատությունը թեմայով:

2005–2007 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն եւ սպասավոր սարկավագ հնդկահայոց եկեղեցիներում:

2007–2008 թթ. աշխատել է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, իսկ 2008 թ. մայիսից կրկին աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում:

2008 թ. մայիս ամսին հաջողությամբ հանձնել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) ավարտական պետական քննությունները եւ ստացել որակավորման նոր վկայական՝ աստվածաբանության մագիստրոսի աստիճանով։

2009–2011 թթ. ծառայել է հայոց բանակում՝ որպես Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հոգեւոր սպասավոր։

2011 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Զաքարիա աբեղա։

2011 թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի թիվ 1537 հրամանով պարգեւատրվել է «ՀՀ Զինված Ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով։

2012 թ. հունվարի 20-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Միջեկեղեցական բաժնի ծխական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու։

2013 թ. մարտի 11-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» թեմայով եւ ապրիլի 6-ին՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ստացել մասնավոր վարդապետության 4 աստիճան։

2015 թ. սեպտեմբերի 22-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է նորաստեղծ Եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն։

2017 թ. մարտի 13-ին պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ «Ս. Եւագր Պոնտացու երկերի Կիրակոս վարդապետ Երզնկացու լուծմունքները (ուսումնասիրություն եւ բնագրեր)» թեմայով եւ մարտի 19-ին՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ստացել ծայրագույն վարդապետության 10 աստիճան։

2017 թ. մայիսի 24-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Եկեղեցական-ժողովական գրասենյակի տնօրեն։

2018–2025 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն։

2018–2022 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն-հիմնարկի եւ Արեւադաշտի «Էօրնեկեան մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն-հիմնարկի տեսուչ։

2018 թ. Երեւանի Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց-հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է։

2024 թ. արժանացել է Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման 105-ամյակին նվիրված անվանական կրծքանշանի։

2025 թ. սեպտեմբերի 11-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Քարոզչական կենտրոնի տնօրեն։

2026 թ. մայիսի 24-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռնադրվել է եպիսկոպոս։

2026 թ. հուլիսի 1-ից Հայրապետական տնօրինությամբ վերանշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդել է «Քրիստոնեական» եւ «Հայ Եկեղեցու հայրեր» առարկաները։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական, Մաշտոցյան Մատենադարանի «Մատենագիրք Հայոց» մատենաշարի խմբագրական խորհուրդների, ինչպես նաեւ Մայր Աթոռի Կրթական, Միսիական, Մասնավոր եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պատրաստության եւ պաշտպանության հանձնախմբերի անդամ է։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչն է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբում։

Հեղինակ է 16 գրքերի եւ 51 աստվածաբանական-հայագիտական հոդվածների, ինչպես նաեւ «Ս. Մկրտություն. հարցեր եւ պատասխաններ», «Երախայից պատրաստություն», «Ավագ շաբաթ», «Սրբալույս Մյուռոն» խորագրերով հեռուստատեսային հաղորդաշարերի։